ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.12.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/311

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.11.2021թ. թիվ 26/26-1/19202-2021 գրությամբ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.11.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/2276-21 գրության հիման վրա, 24.11.2021թ. թիվ 26/26-1/19202-2021 գրությամբ նախաձեռնել է «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն 07.11.2021 թվականին մասնակցել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-2/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին, ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Այնուհետև Պատվիրատուի կողմից շտկում է ուղարկվել, որը հնարավոր չի եղել մեկ/ օրում շտկել:

«Հայաստանի ազգային ագրարային Համալսարան» հիմնադրամի կողմից նախաձեռնվել է «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սակայն ընկերությունը վերոնշյալի հետ կապված ունի առարկություններ.

1. «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն հայտնում է, որ ընկերությունը ս/թ. նորեմբերի 1-ին ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել Դավիթ Հովհաննիսյան Ա/Ձ-ի հետ, որպեսզի վերջինս կատարեր էլեկտրոնային աճուրդների հետ կապված ամբողջ գործընթացը, որը մանրամասն նկարագրված է պայմանագրի հավելված 1-ում, քանի որ ընկերության տնօրենը չի տիրապետում էլեկտրոնային աճուրդների համակարգին և դրա հետ կապված ընթացակարգերին: Ծառայություն մատուցող Ա/Ձ-ի կողմից ներկայացվել է մրցույթի հայտը ս/թ նոյեմբերի 07-ին: Նոյեմբերի 08-ին կայացել է հակադարձ աճուրդը, իսկ արդեն ամսի 9-ին շտկում է ուղարկվել պատվիրատուի կողմից, որը հնարավոր չի եղել իրականացնել Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյանի կորոնավիրուսով հիվանդության կտրուկ վատթարացման պատճառով/կից ներկայացվում է թեստի պատճենը/: Կորոնավիրուսը (COVID-19, այսուհետ) համավարակ) աշխարհում և Հայաստանի Հանրապետությունում տարածման դեպքերով պայմանավորված Առողջապահական համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենի' 2020 թվականի մարտի 13-ի հայտարարությամբ որակվել է որպես պանդեմիա: Ինչպես նաև հարկ եմ համարում նշել, Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել հ.2 արձանագրությամբ նոյեմբերի 15-ին, սակայն տեղեկագրում հրապարակվել է նոյեմբերի 26-ին, լիազոր մարմնի կողմից էլ նախաձեռնել է «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին 23-րդ կետի, ՀՀ կառավարության 05.04.2017թ. 526- Ն որոշման, նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 45-րդ կետի և 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ հստակ կարգավորվում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով: Ընդ որում՝ ժակմետների սահմանումը ինքնանպատակ չէ և հստակ կապված է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ: Հետևաբար ընկերությունը կարող էր ակնկալել, որ այդպիսի գործընթաց իր նկատմամբ չի նախաձեռնվի, քանի դեռ ինքը պատշաճ ծանուցված չէ:

Խնդրում եմ Ձեզ, հիմնվելով վերոգրյալ առարկությունների և ներկայացված փաստերի վրա, «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը մերժել»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/311 ընթացակարգի շրջանակներում 01.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.11.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/2276-21 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2021թ.-ի նոյեմբերի 8-15-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի է ունեցել համազգեստի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/140 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը:

«ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01224658, հասցե՝ Լենինականի փ. տ. 3, հեռ.՝ +37455666878; էլ. փոստի հասցե՝ arevik-nshan@mail.ru) կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ՝ հավելված 1-ում, նշված չէ մասնակցի՝ ռուսերեն լեզվով անվանումը (նշված է կրկին հայերեն լեզվով), դիմում-հայտարարության վերջում նշված չէ ղեկավարի պաշտոնը, իսկ մասնակցի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի վրա նշված ծածկագիրը չի համապատասխանում տվյալ ընթացակարգի ծածկագրին:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և 09.11.2021թ.-ին eAuction համակարգի միջոցով՝ ծանուցմամբ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և https://eauction.armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովին ներկայացնել շտկված փաստաթղթերը՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով սահմանված պահանջները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ի կողմից 11.11.2021թ.-ի դրությամբ և https://eauction.armeps.am համակարգի միջոցով շտկված փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջները:

Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/311 ընթացակարգի շրջանակներում 01.12.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/311 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/311 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում՝ հավելված 1-ում, նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը (նշված է կրկին հայերեն լեզվով), դիմում հայտարարության վերջում նշված չէ ղեկավարի պաշտոնը, իսկ մասնակցի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի վրա նշված ծածկագիրը չի համապատասխանում տվյալ ընթացակարգի ծածկագրին և նույն արձանագրությամբ 09.11.2021թ. որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը e-Auction էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 09.11.2021թ. ծանուցել է Ընկերությանն՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

4. Նույն արձանագրության համաձայն՝ 11.11.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել արձանագրված

թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.11.2021թ. թիվ 26/26-1/19202-2021 գրությունը, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 17.11.2021թ. թիվ Ե/ՎՈՒ/2276-21 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում...:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի...:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ ***աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը հրավիրվում է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում՝***

1) գնահատվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերի՝ սույն հրավերին պահանջներին համապատասխանության հանգամանքը.

2) մերժվում են մյուս մասնակիցների հայտերը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից

ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում՝ հավելված 1-ում, նշված չէ մասնակցի ռուսերեն լեզվով անվանումը (նշված է կրկին հայերեն լեզվով), դիմում հայտարարության վերջում նշված չէ ղեկավարի պաշտոնը, իսկ մասնակցի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի վրա նշված ծածկագիրը չի համապատասխանում տվյալ ընթացակարգի ծածկագրին և նույն արձանագրությամբ 09.11.2021թ. որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանը առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը e-Auction էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով 09.11.2021թ. ծանուցել է Ընկերությանն՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 11.11.2021թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: <u>Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում</u>…:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***<u>մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:</u>***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չի շտկել, որը հանգեցրել է վերջինիս գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում գտնում

եմ, որ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Ընկերության կողմից ՍՑ-ՆԳ-2021/311 ընթացակարգի քննության նպատակով 01.12.2021թ. ժամը 09:30 հրավիրված նիստի ընթացքում վկայակոչված այն հանգամանքին, որ *Ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի կողմից 09.11.2021թ. ուղարկված շտկումը հնարավոր չի եղել իրականացնել Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյանի կորոնավիրուսային հիվանդության պատճառով, ում հետ Ընկերությունը կնքել էր ծառայությունների մատուցման պայմանագիր, որպեսզի վերջինս իրականացնի նաև աճուրդային կարգով մրցույթի անճշտությունների շտկում*, ապա հարկ եմ համարում արձանագրել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, ***իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է:***

Այսինքն՝ գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ:

Այսպիսով՝ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն «ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/140» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հայտ ներկայացնելով իրացրել է իր իրավունքը և ստանձնել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները հրավերով սահմանված պահանջների նկատմամբ

սահմանված կարգով և ժամկետներում շտկելու պարտականություն, հետևաբար վերջինս պետք է ընտրի ստանձնած պարտականությունները կատարելու այնպիսի միջոցներ, որոնց արդյունքում դրանք կիրագործվեն պատշաճ, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտականությունների ոչ պատշաճ կատարման արդյունքում առաջացած բացասական հետևանքները տվյալ դեպքում պետք է կրի «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ն:

Անդրադառնալով Ընկերության կողմից դիրքորոշմամբ վկայակոչված հետևյալ դիտարկմանը. ««*ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել հ.2 արձանագրությամբ նոյեմբերի 15-ին, սակայն տեղեկագրում հրապարակվել է նոյեմբերի 26-ին, լիազոր մարմնի կողմից էլ նախաձեռնել է «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ՝ առանց իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ի հայտ եկած հիմքի: Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասին 23-րդ կետի, ՀՀ կառավարության 05.04.2017թ. 526- Ն որոշման, նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 45-րդ կետի և 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ հստակ կարգավորվում է գնման գործընթացի մասնակիցների գործողությունների հաջորդականությունը՝ հստակ ժամկետներով: Ընդ որում՝ ժակմետների սահմանումը ինքնանպատակ չէ և հստակ կապված է որոշակի իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հետ: Հետևաբար ընկերությունը կարող էր ակնկալել, որ այդպիսի գործընթաց իր նկատմամբ չի նախաձեռնվի, քանի դեռ ինքը պատշաճ ծանուցված չէ,* հարկ եմ համարում արձանագրել, որ նման դիտարկումն անհիմն է, քանի որ Ընկերության կողմից վկայակոչված Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը վերաբերելի է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին Պայմանագիր կնքած անձի պատշաճ ծանուցված լինելուն, ով համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, որը սույն գործին վերաբերելի չէ, քանի որ տվյալ դեպքում առկա չէ կնքված պայմանագիր:

Անդրադառնալով սույն գործի փաստական հանգամանքներին՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2021թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ ***11.11.2021թ.*** Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովն արձանագրել է, որ Ընկերության կողմից չեն ներկայացվել արձանագրված թերությունների շտկված տարբերակները և ***որոշում կայացրել վերջինիս հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:***

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին է ներկայացրել ***17.11.2021թ.*** թիվ Ե/ՎՈՒ/2276-21 գրությամբ:

Այսպես, Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ***հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել, երբ վերջինիս հայտը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է, այսինքն՝ 11.11.2021թ.-ից, իսկ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, թիվ Ե/ՎՈՒ/2276-21 գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին 17.11.2021թ., որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.11.2021թ. թիվ 26/26-1/19202-2021 գրությամբ «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին

նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԱՐԵՎԻԿ ԵՎ ՆՇԱՆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**